

Հաստատվել է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
14.07.2008թ-ի հիմնադիր ժողովի կողմից:

Փոփոխվել է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
բաժնետերերի 30.06.2012թ տարեկան
ընդհանուր ժողովի կողմից:

Փոփոխվել է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
բաժնետերերի 15.02.2016թ արտահերթ
ընդհանուր ժողովի կողմից:


Նոր խմբագրությամբ հաստատվել է
«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի
13.11.2017թ արտահերթ ընդհանուր ժողովի
կողմից:

Նոր խմբագրությամբ հաստատվել է
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի 04.11.2022թ
արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

Փոփոխվել է «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ
բաժնետերերի 06.06.2024թ արտահերթ
ընդհանուր ժողովի կողմից:

Նոր խմբագրությամբ հաստատվել է
«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ բաժնետերերի 25.08.2025թ
արտահերթ նդհանուր ժողովի կողմից:

Ժողովի նախագահ և «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ
գլխավոր տնօրեն՝ Ա. Կայֆաջյան:



Կ. Տ

«ԱՐՄԲՐՈԿ»

բաց բաժնետիրական ընկերության

Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ (Նոր խմբագրություն)

1. Հասկացություններ.....	3
2. Բրոքերային ծառայությունները.....	4
3. Նախքան Պայմանագրի կնքումը Հաճախորդին տրամադրվող և Հաճախորդից պահանջվող տեղեկությունները.....	4
4. Պայմանագիրը.....	5
5. Ընկերության և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները	5
6. Պատվերների ներկայացման և Ընդունման կարգը	7
7. Գործարքների կնքման և կատարման ընդհանուր կարգը.....	9
8. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը	10
9. Պատվերների և գործարքների գրանցումը	11
10. Բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարները.....	11
11. Հաճախորդներին արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրման կարգը	12
12. Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը	12
13. Պատվերների կատարման քաղաքականությունը	13
14. Ընկերության տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը.....	13
15. Ընկերության և Հաճախորդի պատասխանատվությունը.....	14
16. Եզրափակիչ դրույթներ	15

«ԱՐՄԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Բրոքերային (դիլերային) գործունեության կանոնները մշակված են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

1. Հասկացություններ

1.1. Ստորև նշված հասկացությունները սույն կանոններում կիրառվում են ստորև նշված իմաստներով.

«**ՀՀ**». Հայաստանի Հանրապետություն:

«**Օրենք**». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

«**Կենտրոնական բանկ**». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

«**Հաճախորդ**». անձը, որն օգտվում է Ընկերության Բրոքերային ծառայություններից, կամ որը դիմել է Ընկերությանը այդ ծառայությունից օգտվելու նպատակով:

«**Արտարժույթ**». «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցներ:

«**Բրոքերային ծառայություններ**». Սույն կանոնների կանոն 2-ում նշված ծառայություններ:

«**Դիլերային գործունեություն**». Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով/արտարժույթով գործարքների կատարում:

«**Բրոքեր**». Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով/արտարժույթով գործարքներ կատարող աշխատակից, որը Հաճախորդի պատվերի կատարումն ապահովելու շրջանակներում կարող է արժեթղթերով/արտարժույթով գործարքներ կատարել նաև Ընկերության հաշվին և Ընկերության անունից:

«**Դիլեր**». բացառապես Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով/արտարժույթով գործարքներ կատարող Ընկերության աշխատակից:

«**Պայմանագիր**». Ընկերության և Հաճախորդի միջև կնքված պայմանագիր, որի հիման վրա Ընկերությունը Հաճախորդին մատուցում է Բրոքերային ծառայությունները:

«**Պատվեր**». Արժեթղթերով/արտարժույթով գործարքների կնքման նպատակով ներկայացվող Հաճախորդի հանձնարարական:

«**Պատվերի կատարման ներքին սխեմա**». Պատվերի կատարման սխեմա, որի դեպքում Պատվերը կատարվում է Ընկերության և Հաճախորդի միջև գործարքի և Ընկերության և երրորդ անձի միջև պատվերի կատարումն ապահովող գործարքի կնքմամբ:

«**Պատվերի կատարումն ապահովող գործարք**». Հաճախորդի կողմից ներկայացված առքի պատվերի դեպքում Հաճախորդին վաճառելու նպատակով Ընկերության հաշվին և Ընկերության անունից պատվերում նշված արժեթղթերի/արտարժույթի գնում երրորդ անձից կամ Հաճախորդի կողմից

ներկայացված վաճառքի պատվերի դեպքում Ընկերության հաշվին և Ընկերության անունից Հաճախորդից գնված արժեթղթերի/արտարժույթի վաճառք երրորդ անձի:

«**Մարժա**». արժեթղթերի կարճ վաճառք կամ արժեթղթերի մարժայով գնում իրականացնելիս Հաճախորդի սեփական միջոցների և գործարքի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, որն ունի տոկոսային արտահայտություն:

«**Բրոքերային հաշիվ**». Ընկերության կողմից Հաճախորդի համար վարվող էլեկտրոնային գրառումների ամբողջություն, որում արտացոլվում են Հաճախորդին նույնականացնող տվյալները, Հաճախորդի Պատվերները, Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի կողմից Ընկերությանը փոխանցված դրամական միջոցներն ու արժեթղթերը, ինչպես նաև դրանցով կատարված գործարքները:

«**Աշխատանքային օր**». Ցանկացած օր, որը ՀՀ օրենսդրությամբ չի սահմանված որպես հանգստյան կամ ոչ աշխատանքային օր:

- 1.2. Սույն կանոններում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով և Օրենքի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստներով:
- 1.3. Սույն կանոնների իմաստով արժեթղթերը ներառում են նաև ածանցյալ ֆինանսական գործիքները:

2. Բրոքերային ծառայությունները

- 2.1. Սույն կանոնները կարգավորում են Ընկերության կողմից Հաճախորդներին ստորև նշված ծառայությունների մատուցումը.
 - 2.1.1. Պատվերի հիման վրա Ընկերության անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով/արտարժույթով գործարքների կատարում,
 - 2.1.2. Պատվերի հիման վրա Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով/արտարժույթով գործարքների կատարում,
 - 2.1.3. Հաճախորդի համար Բրոքերային հաշվի բացում և վարում,
 - 2.1.4. Հաճախորդին իր կատարած գործարքների և իր բրոքերային հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում,
 - 2.1.5. ՀՀ օրենսդրությամբ և/կամ Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով թույլատրված այլ հարակից ծառայություններ:

3. Նախքան Պայմանագրի կնքումը Հաճախորդին տրամադրվող և Հաճախորդից պահանջվող տեղեկությունները

- 3.1. Նախքան Պայմանագրի կնքումը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է իր «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ»-ով սահմանված տեղեկատվությունը:
- 3.2. Նախքան Պայմանագրի կնքումը Ընկերությունը պետք է Հաճախորդին նաև հնարավորություն ընձեռի ծանոթանալու Հայաստանում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:

- 3.3. Նախքան Պայմանագրի կնքումը Ընկերությունը Հաճախորդից պետք է պահանջի իր «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ»-ով սահմանված տեղեկությունները:

4. Պայմանագիրը

- 4.1. Հաճախորդին Բրոքերային ծառայությունների մատուցումն իրականացվում է սույն կանոնների և Պայմանագրի հիման վրա:
- 4.2. Պայմանագրում և սույն Կանոններում հակասություններ լինելու դեպքում գերակայում է Պայմանագիրը:
- 4.3. Պայմանագիրը կնքվում է Ընկերության ներքին հսկողության համակարգի նկատմամբ պահանջների սահմանման կանոնակարգով սահմանված ընթացակարգով:
- 4.4. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը կարող է իր որոշմամբ սահմանափակել Պայմանագրի օրինակելի ձև:
- 4.5. Պայմանագրի կնքումը և Հաճախորդի հետագա սպասարկումն իրականացվում են Ընկերության «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման կանոններ»-ով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:
- 4.6. Պայմանագրի լուծմամբ դադարում է Բրոքերային ծառայությունների մատուցումը և Պայմանագիրը լուծվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Ընկերությունը Հաճախորդի նշած հաշիվներին է փոխանցում իր տիրապետման ներքո գտնվող Հաճախորդին պատկանող դրամական միջոցները՝ դրանցից գանձելով մինչև պայմանագրի լուծման պահը մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա վճարները, ինչպես նաև այդ փոխանցման կատարման համար սահմանված վճարները և ծախսերը:

5. Ընկերության և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները

- 5.1. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Ընկերությունն իրավունք ունի՝
- 5.1.1. իր մատուցած Բրոքերային ծառայությունների դիմաց Հաճախորդից ստանալ Ընկերության կողմից սահմանված սակագներով որոշվող վարձատրություն, ինչպես նաև Հաճախորդին Բրոքերային ծառայությունների մատուցմամբ պայմանավորված այնպիսի ծախսերի փոխհատուցում, որոնք ներառված չեն Ընկերության կողմից սահմանված սակագներում:
- 5.1.2. Հաճախորդի Բրոքերային հաշվից անակցեպտ եղանակով գանձել Բրոքերային ծառայությունների դիմաց Հաճախորդից ստացման ենթակա վարձատրության և ծախսերի փոխհատուցման գումարները,
- 5.1.3. իր կողմից սահմանված պարբերականությամբ Հաճախորդից պահանջել Պայմանագրի կնքման ժամանակ Հաճախորդի նույնականացման և պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Հաճախորդից ստացված

- տեղեկությունների թարմացման համար անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը,
- 5.1.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իր տնտեսական պատժամիջոցների կիրառման քաղաքականությամբ և/կամ հակակոռուպցիոն քաղաքականությամբ սահմանված դեպքերում, իր հայեցողությամբ, առանց 5.1.5 կետում նշված ժամկետի պահպանման լուծել Պայմանագիրը, արգելափակել Հաճախորդի բրոքերային հաշիվը և/կամ սառեցնել Հաճախորդի ակտիվները,
 - 5.1.5. Սույն կանոնների 5.1.4 կետում չնախատեսված դեպքերում ցանկացած պահի իր հայեցողությամբ միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ լուծման ենթադրվող պահից առնվազն տասն օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Հաճախորդին,
 - 5.1.6. Սույն կանոններով սահմանված դեպքերում չընդունել կամ չկատարել Հաճախորդի պատվերը,
 - 5.1.7. Կասեցնել Բրոքերային ծառայությունների մատուցումը, եթե Հաճախորդն Ընկերության հանդեպ ունի նախկինում մատուցված ծառայությունների գծով չմարված պարտավորություն,
 - 5.1.8. առանց Հաճախորդների նախնական համաձայնության փոփոխություններ մտցնել սույն կանոնների մեջ,
 - 5.1.9. իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ընկերության՝ Բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:
- 5.2. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Ընկերությունը պարտավոր է.
 - 5.2.1. Հաճախորդի Պատվերները կատարել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության՝ Բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերին համապատասխան,
 - 5.2.2. անհապաղ տեղեկացնել Հաճախորդին, եթե առաջ են եկել հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել Պատվերի կատարմանը,
 - 5.2.3. Հաճախորդին տրամադրել Պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվություններ,
 - 5.2.4. ապահովել Հաճախորդի դրամական միջոցների՝ իր միջոցներից առանձնացված պահպանումը,
 - 5.2.5. ապահովել Հաճախորդի դրամական միջոցների՝ իր միջոցներից և իր այլ Հաճախորդների միջոցներից առանձնացված հաշվառումը,
 - 5.2.6. Հաճախորդից համապատասխան պահանջ ստանալու դեպքում կամ Պայմանագիրը լուծվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին փոխանցել Հաճախորդին պատկանող դրամական միջոցները,
 - 5.2.7. Պահպանել Պայմանագրի և պատվերների հետ կապված բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ,

- 5.2.8. Պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով/Արտարժույթով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը պահպանել Պայմանագրի լուծումից հետո առնվազն 5 տարվա ընթացքում և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները,
- 5.2.9. կատարել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության՝ բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
- 5.3. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդն իրավունք ունի.
 - 5.3.1. Ցանկացած պահի իր հայեցողությամբ միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ լուծման ենթադրվող պահից առնվազն տասն օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը,
 - 5.3.2. իր պատվերների կատարման մասին Ընկերությունից ստանալ հաշվետվություններ և ներկայացնել դրանց վերաբերյալ առարկություններ,
 - 5.3.3. Պայմանագրի հետ կապված բողոք-պահանջներ ունենալու դեպքում դրանք ներկայացնել Հայաստանի ֆինանսական համակարգի հաշտարարին (սույն կետը գործում է, եթե Հաճախորդը ֆիզիկական անձ է կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձ),
 - 5.3.4. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության՝ բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:
- 5.4. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդը պարտավոր է՝
 - 5.4.1. տրամադրել Ընկերության կողմից պահանջված տեղեկություններն ու փաստաթղթերը՝ պահպանելով տեղեկատվության ամբողջական, արժանահավատ և ժամանակին լինելու սկզբունքը,
 - 5.4.2. մինչև Ընկերությանը պատվեր ներկայացնելու պահը կամ կողմերի համաձայնությամբ սահմանված այլ ժամկետում վճարել պատվերի կատարման համար Ընկերությանը հասանելիք միջնորդավճարը՝ այն փոխանցելով Ընկերության բանկային հաշվին կամ ապահովելով Ընկերությունում իր համար բացված Բրոքերային հաշվին,
 - 5.4.3. Ընկերությունից ստացված հաշվետվությունների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնել Ընկերությանը հաշվետվության ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում,
 - 5.4.4. կատարել ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության՝ բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

6. Պատվերների ներկայացման և Ընդունման կարգը

- 6.1. Հաճախորդի կողմից Պատվերները ներկայացվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի հաստատած ձևով կամ Հաճախորդի համար նախընտրելի որևէ այլ ֆորմատով, որում, սակայն, պետք է ներառված լինեն Ընկերության

գործադիր մարմնի ղեկավարի հաստատած ձևում լրացման ենթակա բոլոր տեղեկությունները:

- 6.2. Հաճախորդը մինչև Պատվերի ներկայացումը կամ դրա հետ միաժամանակ պետք է Ընկերությանը փոխանցի նաև գործարքի կատարման համար անհրաժեշտ գումարը (արժեթղթերի առքի և արտարժույթային գործարքի պատվերի դեպքում) կամ Ընկերության կողմից կամ միջոցով վարվող դեպո հաշվին ապահովվի գործարքի առարկա արժեթղթերը (արժեթղթերի վաճառքի պատվերի դեպքում), եթե Ընկերության և Հաճախորդի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ: Ընդ որում, եթե Ընկերության և Հաճախորդի համաձայնությամբ սահմանված է, որ Հաճախորդի կողմից արժեթղթերով գործարքի կատարման համար անհրաժեշտ գումարի փոխանցումը կամ արժեթղթերի ապահովումը կարող է կատարվել մինչև պատվերի հիման վրա կնքված գործարքի վերջնահաշվարկի պահը և գործարքի պայմաններով սահմանված է, որ վերջնահաշվարկը կատարվելու է գործարքի կնքումից հետո ոչ ավել քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ապա դա չի համարվում Հաճախորդին արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառության տրամադրում և սույն կանոնների կանոն 11-ի դրույթները այդ դեպքի վրա չեն տարածվում:
- 6.3. Հաճախորդը Պատվերները ներկայացնում է, դրանցում փոփոխություններ է կատարում կամ պատվերները հետ է կանչում Ընկերության «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ»-ով սահմանված կարգով:
- 6.4. Հաճախորդի կողմից Պատվերի ներկայացումը համարվում է Ընկերությանը Պատվերում նշված արժեթղթերով և դրամական միջոցներով Պատվերի կատարմամբ պայմանավորված գործառնությունների, այդ թվում՝ առևտրային արգելադրման և փոխանցման կատարման լիազորագրի տրամադրում:
- 6.5. Եթե Հաճախորդի կողմից պատվերը ներկայացնելու պահին և դրան հաջորդող հինգ աշխատանքային օրերի ընթացքում չի ապահովվում սույն կանոնի 6.2 կետում նշված պայմանը և Ընկերությունը որոշում չի կայացնում Պատվերը չմերժելու մասին, ապա Պատվերը համարվում է մերժված և դրա հիման վրա գործարք չի կնքվում:
- 6.6. Պատվերի ընդունումը կամ կատարումը կարող է մերժվել նաև հետևյալ դեպքերում.
 - 6.6.1. Հաճախորդը չի վճարել նախկինում կատարված պատվերների համար Ընկերությանը հասանելիք վարձատրությունը կամ չի հատուցել այդ պատվերների կատարման համար Ընկերության կատարած ծախսերը,
 - 6.6.2. Ընկերության կարծիքով պատվերի կատարումը կարող է արատավորել Ընկերության գործարար համբավը կամ այլ կերպ վնաս պատճառել Ընկերությանը,
 - 6.6.3. Ընկերության կարծիքով այդ պատվերով գործարքը կարող է որակվել շուկայի չարաշահում,
 - 6.6.4. Ընկերության կարծիքով պատվերում նշված պայմաններով պատվերի կատարումը իրատեսական չէ:

- 6.7. Նախքան Պատվերը կատարելու նպատակով Բրոքերին փոխանցելը հաճախորդներից պատվերներ ստացող և մշակող աշխատակիցը պետք է ստուգի սույն կանոնների 6.5 և 6.6 կետերում նշված հիմքերի առկայությունը՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով իր անմիջական ղեկավարի կամ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի հետ:
- 6.8. Ընկերության՝ հաճախորդներից պատվերներ ստացող և մշակող աշխատակիցը պետք է ապահովի նաև ընդունված պատվերների գրանցումը Ընկերության պատվերների գրանցամատյանում:

7. Գործարքների կնքման և կատարման ընդհանուր կարգը

- 7.1. Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն մինչև տվյալ գործարքի կնքումը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը:
- 7.2. Ընկերությունը Հաճախորդների Պատվերները կատարում է համաձայն իր պատվերների կատարման քաղաքականության:
- 7.3. Բացառությամբ սույն կանոնների 7.8 կետում նշված դեպքի՝ Ընկերության անունից և Ընկերության հաշվին գործարքների կնքման համար հիմք են հանդիսանում Դիլերների կողմից կայացված ներդրումային որոշումները, որոնք պետք է առնվազն բանավոր կարգով համաձայնեցվեն Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված անձի հետ: Դիլերի ներդրումային որոշումների հիման վրա գործարքներ կարող են կնքվել ինչպես Հաճախորդների, այնպես էլ այլ անձանց հետ:
- 7.4. Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես Բրոքերների կողմից:
- 7.5. Բրոքերներին, ինչպես նաև հաճախորդներից պատվերներ ստացող և մշակող աշխատակիցներին արգելվում է հաճախորդներից ստացված կամ ակնկալվող պատվերների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Դիլերներին:
- 7.6. Դիլերները կարող են իրենց ներդրումային որոշումների մասին հայտնել Բրոքերներին:
- 7.7. Եթե առկա է Հաճախորդի Պատվերին հանդիպակաց Դիլերի ներդրումային որոշում, որի պայմանները համընկնում են Պատվերում նշված պայմանների հետ, ապա Հաճախորդի Պատվերը կարող է կատարվել Ընկերության և Հաճախորդի միջև գործարք կնքելու միջոցով, պայմանով, որ առկա չէ հաճախորդի պատվերը ավելի լավ պայմաններով կատարելու հնարավորություն:
- 7.8. Բրոքերն իրավասու է Ընկերության հաշվին և Ընկերության անունից կնքել գործարքներ բացառապես Պատվերի կատարման ներքին սխեմաների շրջանակներում և պայմանով, որ Պատվերի կատարումն ապահովող գործարքների պայմանները չեն տարբերվի համապատասխան Պատվերների հիման վրա Հաճախորդների հետ կնքված գործարքների պայմաններից:
- 7.9. Արտարժույթով գործարքներ կատարելու համար ներկայացված Պատվերները պետք է կատարվեն մինչև տվյալ Պատվերի ներկայացման օրվան հաջորդող օրվա ավարտը: Եթե այդ ժամկետում հնարավոր չի լինում կատարել Պատվերը

համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա Պատվերը համարվում է դադարեցված:

- 7.10. «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում գործարքները կնքվում և կարգավորվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից սահմանված կանոնների համաձայն:
- 7.11. Այլ բորսայում կամ կարգավորվող շուկայում գործարքները կնքվում և կարգավորվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, այդ բորսայի կամ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների և այդ բորսայի կամ կարգավորվող շուկայի օպերատորի գործունեության երկրի օրենսդրության համաձայն:
- 7.12. Չկարգավորվող շուկայում արժեթղթերով գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և այլ իրավական ակտերի համաձայն, իսկ եթե Ընկերության և գործարքի հանդիպակաց կողմի փոխադարձ համաձայնությամբ սահմանվել է, որ գործարքի նկատմամբ կիրառվում է այլ երկրի օրենսդրություն, ապա այդ օրենսդրության համաձայն: Չկարգավորվող շուկայում գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան պայմանագրերով, գլխավոր համաձայնագրերով կամ գործարքների կնքման հարթակների կողմից սահմանված պայմաններով:
- 7.13. Չկարգավորվող շուկայում արտարժույթով գործարքները կնքվում և կատարվում են գործընկեր ֆինանսական կազմակերպությունների միջոցով: Գործարքները կատարվում են այդ կազմակերպություններին փոխարկման հանձնարարական ներկայացնելու կամ նրանց հետ փոխարկման պայմանագիր կնքելու միջոցով: Փոխարկման հանձնարարականի ձևը, ներկայացման ու կատարման գործընթացը կարգավորվում են տվյալ ֆինանսական կազմակերպության ներքին կանոնակարգերով և տվյալ ֆինանսական կազմակերպության գործունեության երկրի օրենսդրությամբ:

8. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը

- 8.1. Եթե Ընկերությունը կատարել է Հաճախորդի Պատվերը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Հաճախորդին տրամադրի Պատվերի կատարման մասին հաշվետվություն՝ դրանում առնվազն ներառելով Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:
- 8.2. Բացի սույն կանոնների 8.1 կետում նշված հաշվետվությունից, Ընկերությունը կարող է Հաճախորդներին ներկայացնել նաև իրենց Բրոքերային հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ այլ հաշվետվություններ և տեղեկություններ:
- 8.3. Սույն կանոններով սահմանված հաշվետվությունները ներկայացվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևերով:

8.4. Սույն կանոնով սահմանված հաշվետվությունները Հաճախորդին ներկայացվում են Ընկերության «Ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգ»-ով սահմանված կարգով:

9. Պատվերների և գործարքների գրանցումը

- 9.1. Ընկերությունը վարում է գրանցումներ Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր Պատվերի մասով:
- 9.2. Ընկերությունը վարում է գրանցումներ արժեթղթերով կնքված յուրաքանչյուր գործարքի մասով, անկախ գործարքի տեսակից, բնույթից և այն բանից, թե ում հաշվին կամ անունից է այն կատարվել:
- 9.3. Պատվերների և գործարքների մասին գրանցումները վարվում են էլեկտրոնային եղանակով:
- 9.4. Պատվերների և գործարքների մասին գրանցումները վարվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանած պահանջների պահպանմամբ:
- 9.5. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը կարող է իր որոշմամբ սահմանել պատվերների և գործարքների վերաբերյալ գրանցման ենթակա տեղեկությունների ցանկ:

10. Բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարները

- 10.1. Եթե սույն կանոններով այլ բան նախատեսված չէ, ապա Բրոքերային ծառայությունների դիմաց վճարների չափը և վճարման ժամկետները սահմանվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված սակագներով կամ Ընկերության և Հաճախորդի միջև կնքված համաձայնագրով:
- 10.2. Ընկերությունը Բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեծությունը որոշելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.
 - 10.2.1. ինքնաֆինանսավորման սկզբունք. ծառայության դիմաց գանձվող վճարը պետք է լինի այնքան, որ թույլ տա ծածկել տվյալ ծառայության մատուցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ընկերությանն ապահովի շահույթի որոշակի ընդունելի մակարդակ,
 - 10.2.2. տնտեսական արդարության սկզբունք. ծառայությունների դիմաց գանձվող վճարի մեծությունը ուղիղ կախվածության մեջ է Հաճախորդի Պատվերների կատարման բարդությունից, ինչպես նաև դրանց կատարման արդյունքում Հաճախորդի ստացած օգուտի մեծությունից:
- 10.3. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը կարող է իր որոշմամբ սահմանել Ընկերության Բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեծության սանդղակ, ինչպես նաև սակագնային պլաններ:
- 10.4. Եթե որևէ ծառայության համար Ընկերության կողմից սահմանված է սակագների միջակայք, ապա կոնկրետ դեպքում կիրառման ենթակա հստակ սակագինը այդ միջակայքի շրջանակներում որոշվում է Ընկերության և Հաճախորդի համաձայնությամբ:

10.5. Պատվերի հիման վրա գործարքը Պատվերում նշվածից ավելի լավ պայմաններով կատարելու դեպքում Ընկերությունը շահած մասից պարգևավճար չի գանձում, եթե Ընկերության և Հաճախորդի միջև այլ համաձայնություն առկա չէ:

11. Հաճախորդներին արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրման կարգը

- 11.1. Ընկերությունը կարող է իր Հաճախորդներին տրամադրել փոխառություններ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ Ընկերությունը հանդիսանում է նման գործարքի կողմ:
- 11.2. Ընկերությունը կարող է Հաճախորդներին տրամադրել փոխառության հետևյալ տեսակները.
 - 11.2.1. արժեթղթերի կարճ վաճառք, որի դեպքում Հաճախորդը Ընկերության միջոցով վաճառում է Ընկերությունից փոխառությամբ վերցված արժեթղթերը,
 - 11.2.2. արժեթղթերի մարժայով գնում, որի դեպքում Հաճախորդը Ընկերության միջոցով գնում է արժեթղթեր՝ գնման համար անհրաժեշտ գումարի մի մասը փոխառությամբ վերցնելով Ընկերությունից,
- 11.3. Սույն կանոնի 11.2 կետում նշված փոխառության տեսակների տրամադրման ժամանակ կիրառվող մարժայի չափը սահմանվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 11.4. Հաճախորդներին արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրումը իրականացվում է Պայմանագրի հիման վրա, իսկ եթե Պայմանագրում նման հնարավորություն նախատեսված չէ, ապա Ընկերության և Հաճախորդի միջև կնքված արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառությունների տրամադրման պայմանագրի հիման վրա:

12. Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը

- 12.1. Ընկերությունում Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.
 - 12.1.1. առանձնացված հաշվառում. Ընկերությունը պետք է վարի առանձնացված հաշվառում յուրաքանչյուր հաճախորդի, ինչպես նաև իր և իր հաճախորդների միջոցների համար,
 - 12.1.2. համադրումների իրականացում. Ընկերությունում պարբերաբար պետք է իրականացվեն համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ հաճախորդների միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև, որոնց մոտ պահվում են հաճախորդների միջոցները,
 - 12.1.3. Չորս աչքի սկզբունքի կիրառում. Հաճախորդների հաշիվներով կատարվող գործառնությունները պետք է ստուգվեն գործառնությունը կատարող անձից տարբերվող անձի կողմից,

- 12.1.4. Ներքին աուդիտ. Ընկերության ընթացիկ գործունեությունը պետք է պարբերաբար ենթարկվի աուդիտի Ընկերությունն ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում, կողմից,
- 12.1.5. Տեղեկատվական անվտանգության ապահովում. Հաճախորդների և նրանց հաշիվների վերաբերյալ առկա ողջ տեղեկատվության նկատմամբ պետք է կիրառվեն Ընկերության Ծառայողական տեղեկությունների պահպանումը կարգավորող կանոնների և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի գործունեության կանոնակարգի ընթացակարգերը:
- 12.2. Ընկերությունն իրավասու է օգտագործել Հաճախորդների միջոցները ի շահ իրեն, գրավադրել Հաճախորդի միջոցներն իր անունից կամ իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ հաճախորդին պատկանող արժեթղթերով, եթե դա նախատեսված է Պայմանագրով կամ Հաճախորդը նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը:

13. Պատվերների կատարման քաղաքականությունը

- 13.1. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը հաստատվում է Ընկերության Գործադիր մարմնի ղեկավարի կողմից:
- 13.2. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի (միջոցների) մասին, ինչպես նաև այն գործոնների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:
- 13.3. Ընկերությունը պետք է Հաճախորդներին տեղյակ պահի Պատվերների կատարման քաղաքականության մասին և ստանա Հաճախորդի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:
- 13.4. Ընկերությունը վերանայում է Պատվերների կատարման քաղաքականությունը այն դեպքում, երբ տեղի է ունեցել այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված՝ գործարքների կնքման վայրի միջոցով կատարել Հաճախորդի Պատվերները Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

14. Ընկերության տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը

- 14.1. Այն դեպքում, երբ Ընկերությունը հիմնավոր փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ իր տարբեր Հաճախորդների միջև Պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան Հաճախորդների Պատվերների կատարման պահը, Հաճախորդներին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:
- 14.2. Եթե հաճախորդները ողջամիտ ժամկետում Ընկերությանը չեն տալիս Ընկերության կողմից իրենց առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները օգտագործելու համաձայնություն, ապա Ընկերությունը

հաճախորդների Պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Այդ դեպքում համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով Պատվերը կատարելու համար:

15. Ընկերության և Հաճախորդի պատասխանատվությունը.

- 15.1. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից տրված պատվերների կատարման արդյունքում Հաճախորդի կրած հետագա վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը Բրոքերային ծառայությունները չի մատուցել պատշաճ մասնագիտական մակարդակով, ճշգրտությամբ և ուշադրությամբ՝ գործելով բարեխղճորեն, ի շահ հաճախորդի:
- 15.2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից նշված արժեթղթերի նկատմամբ պահանջարկի/առաջարկի բացակայության պատճառով վաճառքի/առքի պատվերի չկատարման կամ մասնակի կատարման համար:
- 15.3. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Ընկերության պարտավորությունների կատարմանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցող երրորդ անձանց, ներառյալ բայց չսահմանափակվելով՝ առևտրային համակարգերի, պահառուների, ռեեստրավարների, բրոքերների, բանկերի, գործընկերների գործողությունների կամ անգործության հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:
- 15.4. Ընկերությունը պատասխանատվություն է կրում սույն կանոններով և/կամ Պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա եղել է Ընկերության մեղքով և հետևանք է Ընկերության ոչ բարեխիղճ գործունեության:
- 15.5. Ընկերության մեղքով Պատվերի չկատարման դեպքում Հաճախորդն իրավունք ունի Ընկերությունից պահանջել վճարել Պատվերում նշված միջնորդավճարի չափով տուգանք:
- 15.6. Եթե Հաճախորդը չի կատարում կամ ուշացումով է կատարում իր Պատվերի հիման վրա կնքված գործարքի գծով իր պարտավորությունները, ապա Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդից պահանջել դրա հետևանքով Ընկերության կրած փաստացի և փաստաթղթերով հիմնավորված վնասների փոխհատուցում, ինչպես նաև տուգանք՝ պատվերում նշված գործարքի գումարի մինչև 5%-ի չափով:
- 15.7. Ընկերության մատուցած ծառայությունների դիմաց սահմանված վճարը չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշացումով վճարելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի Հաճախորդից պահանջել տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարած գումարի 0.13%-ի չափով, սակայն ոչ ավել քան չվճարած գումարի 100%:

- 15.8. Կողմերն ազատվում են սույն կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված պարտականությունների լրիվ կամ մասնակի չկատարման համար պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է անհաղթահարելի ուժի հանգամանքներով (ֆորս մաժոր), որոնք Կողմերը ողջամտորեն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ տարերային աղետները (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ և այլն), պատերազմները, ռազմական գործողությունները, ահաբեկչությունները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, պետական մարմինների գործողությունները, միջազգային կամ ազգային տնտեսական պատժամիջոցները օրենսդրության փոփոխությունները, ինչպես նաև այլ հանգամանքները, որոնք ողջամտորեն դուրս են Կողմերի վերահսկողությունից և որոնք անհնարին են դարձնում սույն կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:
- 15.9. Անհաղթահարելի ուժի հանգամանքներին բախված կողմը պարտավոր է այդ հանգամանքները ի հայտ գալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնել մյուս կողմին այդ հանգամանքների և իր պարտավորությունների կատարման վրա դրանց ազդեցության մասին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ:
- 15.10. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ի հայտ գալու դեպքում Սույն կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է այդ հանգամանքների առկայության ժամանակահատվածով և դրա հետևանքների վերացման համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետով:

16. Եզրափակիչ դրույթներ

- 16.1. Սույն կանոններով սահմանված կարգով Հաճախորդին տրամադրվող տեղեկատվությունը, Հաճախորդից պահանջվող տեղեկությունները, Հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները և Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները կարող են լինել հայերեն, իսկ Ընկերության և Հաճախորդի համաձայնության դեպքում՝ անգլերեն կամ ռուսերեն:
- 16.2. Սույն կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից սահմանված պահից:
- 16.3. Ընկերությունը պարտավոր է սույն կանոնների փոփոխությունների մասին ծանուցել Հաճախորդներին փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահից առնվազն 20 օր առաջ: Փոփոխված Կանոնների հրապարակումը Ընկերության պաշտոնական կայքում համարվում է պատշաճ ծանուցում: